ների ու քաղաքապետարանի ներկայացուցիչները։ Այդ կոմիտէի գումները բաց պիտի ըլլան։ վերոյիշեալներէն ցանկացողները կարող են ներկայացուցիչ ուղարկել և կամ ուզած ժամանակ իրենց ներկայացուցչին յետ կանչել։ Կոմիտէն պիտի զբաղուի նաև գործնական խնդիրներով՝ ցուցմունքներ անելով և օգտուելով ի պահանջել հարկին զանազան հիմնարկութիւնների արագ հայցման։ Կոմիտէն ունի իր մնայուն դիւանը՝ վարելու համար ծրագրուած աշխատանքները։

Անշուշտ, որոշ չափով այս շարժման ազդեցութեան տակ էր, որ մայիս 15–ին ներքին գործոց նախարարի օգնական Ս.Մանասեանը ուղարկեց հետևեալ շրջաբերականը։

«Առաջարկում եմ այսուհետև գաւառում բոլոր գրագրութիւնը գաւառական, հասարակական և գիւղական կոմիսարների և նմանապէս բոլոր հիմնարկութիւնների պաշտօնեաների հետ վարել հայերէն՝ հասկացնելով ազգաբնակութեան, որ խնդիրները, բացատրութիւնները հիմնարկութիւններին և պաշտօնեաներին պէտք է գրել հայերէն։ Նոր պաշտօնեաներին ընդունելիս պէտք է պահանջել և դերադասութիւն տալ նրանց, որոնք տիրապետում են հայոց լեզուին։ Թէ գաւառական կոմիսարների և թէ բոլոր ստորադրեալ պաշտօնեաների կազմած արձանագրութիւնները պէտք է լինեն հայերէն, իսկ եթէ մեղադրուողը հայ չէ, արձանագրութիւնը կարելի է կազմել և ռուսերէն։ Կարգադրեցէք, որ բոլոր հայ գիւղերում համախօսականներ, հրամաններ և, ընդհանրապէս, ամբողջ գործավարութիւնը կազմուեն և կատարուեն հայերէն»։

Տարայ վերջը պետական և հանրային հիմնարկութիւնների մեծ մասը արդէն հայացուած էր։ դեկտ. 26–ի օրէնքով հայերէնը յայտարարուեց պետական լեզու։

Երկրի վերաշինութեան և տնտեսական բարեկարգութեան համար կատարուեցին մի շարք արժէքաւոր ձեռնարկներ։ ապրիլ–մայիս ամիսներին բանակցութիւններ կատարուեցին Անդրկովկասի ջրային գործի հեղինակաւոր մասնագէտ Ս. Զաւալիշինի հետ և նրան յանձնուեց Հայաստանի սահմանների ջրային ուժի և ոռոգման ուսումնասիրութեան աշխատանքը։ Այդ նպատակով յատկացուեց 4 միլիոն ռուբլի։ Ս. Զաւալիշինը գործի կանչեց մի շարք առաջնակարգ մասնագէտներ — Պ. Վէյնմարն, Զվորիկին, Կոժևնիկով և ուրիշներ—մօտ 70 ինժեներներ, տեխնիկներ, հանքաբաններ, հողագէտներ ու բուսաբաններ և աւելի քան մէկ տարի անընդհատ հետազօտութեան ենթարկեց ու ծրագրներ կազմեց Հայաստանի ջրային կարողութիւնների մասին՝ որոշելով ոռոգման դրութիւնը, առուների ուղղութիւնը, էլեկտրակայանների կազմն ու տեղը և այլն։ Յետագային, այս հետազօտութեան արդիւնքները ընդունեցին ակադ. Ա. Թամանեանի նախագահութեամբ կազմուած յանձնախմբի կողմից և մինչև այսօր էլ անգնահատելի նիւթ են ծառայում Հայաստանի համար։

Մայիս 1–ին պարեն. նախ. Բ. Վերմիշեանի առաջարկով և արդ. նախ. Ս. Յարութիւնեանի իրաւաբանական եզրակացութեամբ կառավարութիւնը ոչնչացուած համարեց Կողբի աղահանքի կապալի պայմանները և աղահանքերը դրաւեց յարգունիս՝ պետական միջոցներով կազմակերպելով աղի արտադրութիւնն ու վաճառքը։